

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր Կազմեց՝ Մանուշակ Աբրահամյանը

Ուսումնական նախագծերի փաթեթ 3-րդ դասարանի համար

Ուսումնական նախագծերը կազմվել են [2019-2020 ուսումնական օրացույցի](#) շրջանակում՝ ներառելով «Իմացումի հրճվանք» կրթական ծրագրում ներառված գործունեության ոլորտները (լեզվա-ստեղծագործական, ընթերցանություն, մաթեմատիկական, տեխնոլոգիա-կերպարվեստ, երաժշտական, մարզական և այլն):

2019-2020 ուստարի

Ուսուցման առաջին շրջան

Ես. ուսումնական նախագիծ

«Ես» ուսումնական նախագիծը արտացոլված չէ կրթահամալիրի ուսումնական օրացույցում, սակայն կրտսեր դպրոցում այն իրագործելի, սիրելի ու կարևոր նախագիծ է, քանի որ համընկնում է ուսումնական տարվա մեկնարկի հետ: Նախագիծն իրականացվում է 1-3-րդ դասարաններում՝ յուրաքանչյուր տարի ունենալով իր զարգացումը:

Իրականացման տևողությունը՝ սեպտեմբերի 1-20-ը:

Նպատակը՝

Սովորողների ինքնաճանաչման միջոցով նպաստել փոխհարաբերությունների (սովորող-սովորողներ, սովորող-ուսուցիչ) ամրապնդմանը՝ զարգացնելով սովորողների ինքնուրույնությունն ու ինքնասպասարկման հմտությունները: Ինչպես նաև, սովորողների ընտանիքներին ներգրավելով ուսումնական աշխատանքներում՝ դարձնել կրթական ծրագրի պատասխանատու:

Խնդիրները՝

- Մեղիահմտությունների, մեղիագործիքների ու համակարգչային ծրագրերի կիրառում,
- բանավոր ու գրավոր խոսքի զարգացում,
- անհաժեշտ ինֆորմացիա հավաքելու հմտությունների ձևավորում ու զարգացում,
- հարցեր տալու (մշակելու) ու հարցազրույց վարելու հմտությունների ձևավորում ու զարգացում,
- տեխնոլոգիական հմտությունների զարգացում,
- հաղորդակցական հմտությունների զարգացում,
- համագործակցային հմտությունների զարգացում,
- ստեղծագործական երևակայության զարգացում:

Միջավայրը՝

Դասասենյակ, բակ-պարտեզ, մարմնամարզական դահլիճ, տուն (ընտանիք), մեղիատիրույթ (սովորողի բլոգ, դասարանական բլոգ, ենթակայք, կայք):

Անհրաժեշտ գործիքները՝

Անհատական ներբուք-նոթբուք, ձայնագրիչ, տեսախցիկ, համակարգչային ծրագրեր (Paint, Power Point, Movie Maker կամ այլ մոնտաժային ծրագիր), թղթեր (գունավոր, տարբեր հաստության ու չափի), գուաշ, ջրաներկ, վրձին, կավ, պլաստիլին, այլ (կտորներ, կոճակներ, ժապավեններ...):

Ուսումնական ռեսուրսները՝

- [Հովհաննես Թումանյան «Թռչունի մտածմունքը», «Ամենից լավ տունը»](#)
- Անունների ծագման պատություն (հանրագիտարան, որոնողական կայքեր)
- Սովորողների ինքնապատումներ

Պատումներ, ստեղծագործական աշխատանք՝

- Իմ տունը, սենյակը
- Իմ ընտանիքը
- Իմ սիրելի զբաղմունքը

- Ես հրաշք եմ, որովհետև...

Արդյունքը՝

Աշխատանքները կարող են ներկայացնել պատումի, ձայնագրության, շնորհանդեսի (պրեզենտացիայի), տեսաֆիլմի տեսքով: Բոլոր աշխատանքները հրապարակվում են սովորողների բլոգներում:

Բարձունքի հաղթահարում

«Բարձունքի հաղթահարում» նախագծի շրջանակներում պատրաստվում ենք իրականացնել ուսումնահետազոտական ճամփորդություն.

Վայրը՝ [Մեղրաձոր](#). [«Թեժառույք»](#) Վանական համալիր

Թեժառույքը կամ Տրդատավանքը գտնվում է Մեղրաձոր գյուղից հարավ-արևմուտք, ճանապարհին անցնում է անտառապատ արահետներով:



Հեռավորությունը Հյուսիսային դպրոցից՝ 75 կմ

Ճանապարհի տևողությունը՝ մեքենայով՝ 1 ժամ 21 րոպե

Երթուղին, կանգառները՝ Երևան-Մեղրաձոր-Մարմարիկ գետի ձախ ավի-Թեժառույքի վանական համալիր

Եղանակի կանխատեսումը՝ [այստեղ](#)

Ճամփորդության ամսաթիվը՝ ...

Մեկնումը դպրոցից` ...

Ժամանումը դպրոց` ...

Ճամփորդության ղեկավարը` ...

Օգնականը` ...

Ֆոտո-տեսա նկարահանման, ուղիղ եթերների պատասխանատուն` ...

Մասնակիցները` 3-րդ դասարանի սովորողներ, դասավանդողներ, ծնողներ

Ճամփորդության նպատակը`

- Հայրենաճանաչողություն ուսումնական ճամփորդության միջոցով:
- Սովորողների ուսման կազմակերպում ճամփորդության միջոցով:
- Բարձունքի հաղթահարում:

Խնդիրները`

- Գործունեության նախատեսում և իրականացում,
- որևէ գործունեության նախապատրաստվելու հմտության զարգացում,
- տեղեկատվության փնտրտուք,
- ձեռք բերած տեղեկությունները համադրելու, համեմատելու, դրանց մասին տեղեկատվություն պատրաստելու և ներկայացնելու կարողությունների զարգացում,
- թիմով ընդհանուր խնդիրներ լուծելու, խմբով աշխատելու կարողությունների զարգացում,
- ընտանիքին ներառել դպրոցական կրթությանը, մասնակից դարձնել ուսումնական գործընթացին,
- սովորողների ֆիզիկական զարգացում,
- շրջակա միջավայրի ուսումնասիրում, ճանաչում, մշակում:

Նախապատրաստական փուլ. գործունեության համառոտ նկարագրությունը

Սովորողների հետ վերհիշում և թվարկում ենք Հայաստանի մարզերը, համացանցում տեղեկություններ ենք փնտրում տեղանքի մասին: [Google.map](https://www.google.com/maps) ծրագրով գտնում և ուսումնասիրում ենք տեղանքը:

Նույն ծրագրի օգնությամբ հաշվում են Երևանից-Մեղրաձոր (Թեժառույթի վանական համալիր) հեռավորությունը` մեքենայով, ոտքով: Երկու դեպքերում հաշվարկում ճամփորդության ընթացքը (տևողությունը): [Օլիմպի](https://www.olympic.org) օգնությամբ վիրտուալ շրջայց ենք կատարում Թեժառույթի վանական համալիրում:

Դիտում ենք կրթահամալիրի սովորողների նախկին ճամփորդությունների հաշվետու ֆիլմերը` [1](#), [2](#) (կցված են ուսումնական ռեսուրսներ, սովորողների կողմից ստեղծված տեսանյութեր)

Մինչ ճամփորդությունը յուրաքանչյուր սովորող պետք է իմանա իր դերն ու նշանակությունը` ինչի համար է պատասխանատու, որն է իր անելիքը ճամփորդության ընթացքում: Սովորողներն ըստ նախասիրությունների բաժանվում են խմբերի: Օրինակ` սանիտարների խումբը, որն իր հետ կունենա անհրաժեշտ բժշկական պարագաներ և անհրաժեշտության դեպքում կօգնի վնասված կամ հիվանդ երեխային:

Մաթեմատիկների խումբը կհաշվարկի ճամփորդության ծախսերը, վարորդի օգնությամբ կգրանցի ճանապարհի երկարությունը, որքան ժամանակում կհասնենք նշված վայրը, կփորձենք քայլերով հաշվել բարձունքի բարձրությունը:

Մենդի պատասխանատուները կկազմեն սենդի ցուցակը, կհաշվեն սենդի ծախսերը, կպատրաստեն բուտերբրոտները և հոգ կտանեն որպեսզի բոլորը սնվեն:

Լրագրողների խումբը պետք է ներկայանա S2S միջոցներով: Տեսախցիկ, ֆոտոխցիկ, ձայնագրիչ՝ կայքի նյութը, ֆոտոշարքը կամ ֆիլմը պատրաստելու համար:

Կարող է լինել բնագետների խումբ: Այդ խումբը կարող է կազմակերպել տեղանքի մաքրումը, հանրօգուտ աշխատանքը, ձեռք բերել բույսերի, տերևների, քարերի տեսակներ:

Դասարանում քննարկելու, ծանոթանալու և ձեռարվեստին որպես նյութ օգտագործելու համար:

Իրակացման փուլ՝ գործունեության համառոտ նկարագրությունը

Հաղթահարում ենք Թեժառույթի բարձունքը, ուսումնասիրում՝ տեղանքը, վանական համալիրը, աղբից մաքրում տարածքը, լուսանկարում:

Մարմարիկ գետի ափին կարդում ենք Թումանյան, երգում ենք [Կոմիտաս](#):

Անհրաժեշտ պարագաներ՝

- Ուսապարկ
- Բրդուճներ
- Թաց և չոր անձեռոցիկներ
- Ջուր-ջրաման-թերմոս
- Արևապաշտպան գլխարկ
- Հարմար հագուստ, կոշիկ
- Բուժական արկղիկ
- Մեղիագործիքներ – հեռախոս, պլանշետ, ֆոտոխցիկ, ձայնագրիչ
- Աղբի տոպրակ, մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ
- Հեռադիտակ
- Կողմացույց

Ամփոփում. գործունեության համառոտ նկարագրություն

Սովորողները

- Ծանոթանում են տեղանքին,
- հավաքում են տեղեկություններ, պատմում և գրում են իրենց տեսածի և լսածի մասին բլոգում, զարգանում է բանավոր խոսքը,
- կատարում են չափումներ և հաշվարկներ, ձեռք են բերում մաթեմատիկական գիտելիքներ,
- S2S հմտություններ՝ պրոգնոստացիաների պատրաստում, ֆոտոխցիկի, ձայնագրիչի կիրառում, ֆոտոշարքի և անհատական ֆիլմերի ստեղծում:

Տիեզերք

«Տիեզերք» ուսումնական նախագիծն ամենամյա է և իրականացվում է կրտսեր դպրոցի 1-3-րդ դասարաններում:

Իրականացման տևողությունը՝ շուրջտարյա

Նպատակը՝

Պատկերացում տալ Արեգակնային համակարգի, մասնավորապես՝ Երկիր մոլորակի մասին՝ կարևորելով մարդու դերը նրա պահպանության հարցում:

Խնդիրները՝

- Ջարգացնել տեսանյութեր դիտելու, տեղեկույթ կարդալու, դրանց բովանդակությունը ներկայացնելու կարողությունները,
- զարգացնել տեղեկույթը կարդալիս գլխավոր միտքը երկրորդականից տարբերակելու կարողությունները,
- ձևավորել և զարգացնել ունեցած տեղեկույթը ներկայացնելու կարողությունները P. Point ծրագրով,
- զարգացնել P. Point ծրագրով աշխատելու կարողությունները,
- ձևավորել և զարգացնել դիտարկումներ, դիտումներ, ուսումնասիրություններ կատարելու կարողություններ,
- ձևավորել և զարգացնել աշխատանքը պլանավորելու, նախագծելու և քայլ առ քայլ իրականացնելու կարողություններ,
- զարգացնել քարտեզից օգտվելու կարողություններ:

Ուսումնական ռեսուրսները՝

- [Ճանապարհորդություն դեպի Լուսին. \(ֆրանսիական ժողովրդական հեքիաթ\)](#)
- [Վայր ընկնող աստղեր. \(տեղեկատվական նյութ\)](#)
- [Արև. \(տեղեկատվական նյութ\)](#)
- [Աստղեր. \(տեղեկատվական նյութ\)](#)
- [Լուսին. \(տեղեկատվական նյութ\)](#)

Գործունեությունը և արդյունքը՝

1-ին փուլ

Կարդալ, դիտել, մեկնաբանել, քննարկել ուսումնական նյութեր և տեսանյութեր հետևյալ թեմաների մասին՝

- Արեգակնային համակարգ [1](#) , [2](#) , [3](#) (ռուս.)
- Երկիր մոլորակ [1,2](#)(ռուս)
- [Գլոբուս](#), Քարտեզ
- Տարվա եղանակներ
- Գիշեր, ցերեկ
- Մայրցամաքներ, օվկիանոսներ
- Բնական երևույթներ
- Բնական տարերքներ
- Բնական ռեսուրսներ

2-րդ փուլ

- 2-3 հոգիանոց խմբերով տեղեկատվական նյութեր պատրաստել (լրացուցիչ տեղեկույթի որոնում, համադրում ունեցածի հետ) թվարկած թեմաների մասին:
- Աշխատանքները ներկայացնել դասարանին, հրապարակել բլոգներում:

3-րդ փուլ

- Կարդալ արևի, լուսնի, աստղերի, գիշերվա, ցերեկի մասին ավանդապատումներ:
- Հորինել նոր ավանդապատումներ, հանելուկներ, հրապարակել բլոգում:

Կոմիտասյան օրեր

«Կոմիտասյան օրեր» ուսումնական նախագիծն ամենամյա է և իրականացվում է կրտսեր դպրոցի 1-3-րդ դասարաններում: Նախագիծն ամփոփում ենք «Հակաբացիլ Կոմիտասի» փառատոնով:

Իրականացման տևողությունը՝ շուրջտարյա

Նպատակը՝

սովորողներին ծանոթացնել Կոմիտասի ստեղծագործություններին, ձևավորել սեր ազգային երաժշտության հանդեպ, տարբեր գործունեություններով տարածել կոմիտասյան երգն ու երաժշտությունը:

Խնդիրները՝

- Վերհիշել սովորած երգերը, պարերգերը՝ «Կաքավիկ», «Զիուկ», «Հոյ Նազան», «Սոնա Յար», «Այբբեն-գիմ», «Լորիկ», «Եղնիկ» և այլն,
- կարդալ, հասկանալ, բերանացի սովորել նոր երգերի խոսքերը. «Կռունկ ծափ տուր ու թռի», «Սարսար», «Հոպ, թռի»,
- կարդալ, լսել Կոմիտասի մասին,
- ունկնդրել երաժշտություն՝ [6 պար, 7 երգ](#),
- նկարել երաժշտության ներքո,
- այցելել [Կոմիտասի թանգարան-ինստիտուտ](#):

Ուսումնական ռեսուրսները՝

- [Երգերի խոսքեր, կատարումներ](#)
- [Ստեղծագործությունները՝ «Չայնադարան»](#)-ում

Խնկոյանական օրեր

«Խնկոյանական օրեր» ուսումնական նախագիծն ամենամյա է և իրականացվում է կրտսեր դպրոցի 1-3-րդ դասարաններում:

Իրականացման տևողությունը՝ հոկտեմբեր

Նպատակը՝

Խնկոյանական ստեղծագործությունների միջոցով զարգացնել սովորողների բանավոր և գրավոր խոսքը, վերլուծական, քննադատական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը, անկաշկանդ արտահայտվելու կարողությունը:

Խնդիրները՝

- Ա. Խնկոյանի նոր ստեղծագործությունների ծանոթացում, յուրացում,
- խնկոյանական ընթերցարանների, ֆիլմերի, հեքիաթների ժողովածուների ստեղծում (անհատական, խմբային),
- բառապաշարի հարստացում,
- բանավոր և գրավոր խոսքի, ստեղծագործական երևակայության զարգացում,
- տեխնոլոգիական, մեդիատեխնոլոգիական, բնագիտական, երաժշտական հմտությունների զարգացում:

Ստեղծագործությունների ցանկ՝

- [Փեսացու մուկը](#)
- [Ճպրուն ու մրջյունը](#)
- [Ագռավն ու աղվեսը](#)
- [Մկների ժողովը](#)
- [Վատ ընկերը](#)

Աշխատանք ստեղծագործությունների հետ՝

- Անհասկանալ բառերի բացատրություն
- Խաղ-ուսուցում
- Ջրույց-քննարկում
- Բեմականացում
- Տեխնոլոգիական գործունեություն՝ հերոսներին նկարել, ծեփել և այլն
- Ռադիոթատրոնի, մեդիաֆիլմի ստեղծում

Ընտանեկան աշխատանք՝

[Ա. Խնկոյանի առակներից](#) ընտրել որևէ մեկը ներկայացնել ռադիոթատրոնի կամ բեմադրության տեսքով:

Առանձնացնել [առականում](#) հանդիպող կենդանիների անունները, ընտրել որևէ մեկն ու փոքրիկ տեսանյութ, պատում կամ ռադիոնյութ պատրաստել նրա մասին:

Ունկնդրման համար՝

- [Ագռավն ու աղվեսը](#)
- [Ճպրուն ու մրջյունը](#)
- [Վատ ընկերը](#)
- [Գայլն ու գառը](#)
- [Գայլն ու մուկը](#)

Ուսումնական աշուն

«Ուսումնական աշուն» նախագիծը նախատեսվում է իրականացնել աշնանային ուսումնական արձակուրդների ընթացքում:

Իրականացման տևողությունը՝ հոկտեմբերի 28 - նոյեմբերի 3

Նպատակը՝

Ուսումնասիրության, դիտարկումների արդյունքում ձեռք բերած ճամփորդական, հաղորդակցական, մեդիահամտությունները կիրառել շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված աշխատանքներում:

Խնդիրները՝

- Շրջապատը հետազոտելու, խնամելու, պահպանելու, բարեկարգելու կարողությունների զարգացում,
- բույսի, եղանակի, երևույթի, առարկայի, օրվա փոփոխությունների դիտարկում,
- թվային միջոցներից օգտվելու կարողությունների կիրառում:

Աշխատանքնային ուղղություններ՝

Աշխատանք դպրոցում

- միջավայրի խնամք
- «Ուսումնական մառան»-ի ապրաքների փաթեթավորում

Աշխատանք տանը

- Բանահավաքություն. երգում-պատում են մեծերը
- արձակուրդային շաբաթվա օրացույց, օրագրի ստեղծում
- ընտանեկան թատրոն. [«Խնկոյանական» նախագծի](#) շրջանակներում
- իմ ծնողների աշխատավայրից
- աշնանային ֆոտոշարի ստեղծում
- մեր բակի աշունը. ձայնագրություն, տեսանյութ
- իմ տնկած ծառը, թաղարը...
- աշնանային խորհուրդներ. հարցազրույցների և պատումների ձայնագրում
- շրջակա միջավայրի փոփոխության և եղանակի տեսության դիտարկում
- [Ուրբաթ-համերգ՝ առականի](#) նյութի ամնապնդում

Աշնանային ընթերցանություն

Միրելի՛ սովորող, արձակուրդային շաբաթվա ընթացքում առաջարկվող գրքերից ընտրի՛ր որևէ մեկը, կամ էլ քո նախընտրած գիրքը, և ընթերցի՛ր: Կարող ես օգտվել կրթահամալիրի [«Տիգրան Հայրապետյան»](#) գրադարանից:

Առաջարկում եմ հետևյալ ցանկը՝

- Ալան Ալեքսանդր Միլն [«Վինի Թուխը և բոլոր-բոլորը»](#)
- Աստրիդ Լինդգրեն [«Երեք վիպակ Մանչուկի ու Կառլսոնի մասին»](#)
- Աստրիդ Լինդգրեն [«Էմիլը Լյոներեբգիայից»](#)
- Դոնալդ Բիսեթի [«Հեքիաթներ»](#)

Գրիքը կարդալու ընթացքում կամ հետո կատարի՛ր հետևյալ առաջադրանքները՝

- Բլոգումդ բացի՛ր «Իմ գրադարանը» բաժինը և կարդացածդ գրքի (գրքերի) մասին պատմելիս նշի՛ր այդ բաժինը:
- Ի՞նչ գիրք ես կարդում կամ արդեն կարդացել (վերնագիրը, հեղինակի անունը):
- Առանձնացրո՛ւ քեզ դուր եկած ամենահետաքրքիր հատվածը կամ արտահայտությունը:
- Առանձնացրո՛ւ հերոսներին, նկարագրի՛ր և բնութագրի՛ր նրանց:
- Գրի՛ր կարծիք կարդացածդ գրքի մասին:
- Գովազդի՛ր կարդացածդ գիրքը:

Նախագծի արդյունքում ստեղծված՝ տեսագրված, նկարահանված, ձայնագրված նյութերը հրապարակվում են դասարանական բլոգում, սովորողների անհատական բլոգներում:

Մեքաստացու օրեր

[«Մեքաստացու օրեր. կրթահամալիրի տոն»](#) ստուգատեսը նախատեսված է կրթահամալիրի ուսումնական օրացույցով:

«Մեքաստացու օրեր. կրթահամալիրի տոն» ստուգատեսը մեկնարկում է պատում-քննարկումների, հարցազրույցների, ուսումնասիրությունների բազմաթիվ շարքերով, որտեղ սովորողները, նրանց

ընտանիքի անդամները, ուսուցիչները պատմում ու փոխանցում են կրթահամալիրի, իրենց մասին հետաքրքիր, սեփաստացիական պատմումներ: Սովորողները սկսում են ինքնուրույն կամ խմբով ուսումնասիրել «Մխիթար Սեփաստացի» կրթահամալիրի ստեղծման պատմությունը, ճանաչում են ամենասեփաստացիներին: Ուսումնասիրության արդյունքները, իրենց պատմումները, հարցազրույցները պարբերաբար հրապարակվում են բլոգում, ենթակայքում, կայքում:

Իրականացման տևողությունը՝ նոյեմբերի 1-15

Նպատակը՝

Սովորողների, նրանց ընտանիքների կրթահամալիրային գործունեության միջոցով ֆիզիկական և մեղիա միջավայրում հրապարակային, հասկանալի դարձնել կրթահամալիրի գործունեությունը, պատմությունը, մանկավարժական մոտեցումները:

Խնդիրները՝

- Անհրաժեշտ տեղեկություններ (ինֆորմացիա) հավաքելու հմտությունների զարգացում
- Հետազոտական, վերլուծական կարողությունների ձևավորում ու զարգացում
- Ստեղծագործական երևակայության զարգացում
- Մեղիահմտությունների զարգացում (բլոգավարություն)
- Տեխնոլոգիական հմտությունների զարգացում
- Տեղեկատվական բնույթի տեքստի ընթերցանության ու քննարկման կարողությունների զարգացում:

Ուսումնական ռեսուրսները՝

- Հարցազրույց կրթահամալիրի տնօրեն [Աշոտ Բլեյանի հետ](#)
- [Ո՞վ է Մխիթար Սեփաստացին](#)
- [Ինչո՞ւ է մեր կրթահամալիրը կոչվում Սեփաստացու անունով](#)
- [Կրթահամալիրի ստեղծման պատմությունը](#)
- [Կրթահամալիր հիմնի ընթերցում. վերլուծություն](#)

Ուսումնական գործունեությունները՝

Պատումների, ստեղծագործական աշխատանքների թեմաներ՝

- Ո՞վ է իսկական սեփաստացին
- Ինչպե՞ս հայտնվեցի կրթահամալիրում
- Ինչպիսի՞նն են սեփաստացի ուսուցիչները
- Ինչո՞ւ եմ սիրում կրթահամալիրը
- Իմ ընտանիքի սեփաստացիները (ուսումնասիրություն)
- Պատում ու ներկայանում են սեփաստացի ծնողները
- Հանելուկ-հանմանելուկ. գուշակիր ո՞վ է (ճանաչում են ամենասեփաստացիներին)

Տեխնոլոգիական գործունեություն

- Կավե հուշանվերների պատրաստում
- Հուշանվերների պատրաստում կրթահամալիրի հյուրերի համար
- «Ուսումնական մառան» ցուցահանդես-վաճառքի նախապատրաստություն
- Նմուշների ստեղծում, տարաների ձևավորում, էկո տոպրակների պատրաստում, պիտակների ստեղծում փաթեթավորում բաց լաբորատորիայում

Մարզական գործունեություն

- Էսթաֆետային խաղեր, առաջնություններ

Վարպետության դասեր (ծնողներ, դասավանդող մասնագետներ, ավագ սեփականատերեր)

Ես սեփականատեր ուսուցիչ եմ...

Յուրաքանչյուր սովորող ընտանեկան քննարկումից հետո փորձում է դասարանական համայնքի առջև ներկայանալ որպես ուսուցիչ: Կարող են ներկայանալ ծնողի կամ ընկերների հետ միասին:

Թեմաները՝ մասնագիտական հմտություններ, խոհարարական բաղադրատոմսեր, մաթեմատիկական-տրամաբանական խնդիրներ, բնագիտական փորձեր, նոր լեզվի ուսուցում և այլն...

Իրականացման ընթացքը (ընդհանուր նկարագրություն)

Սովորողները, օգտվելով տեղեկատվական տարբեր աղբյուրներից, ծանոթանում են Մխիթար Սեփականատեր գործչին, «Մխիթար Սեփականատեր» կրթահամալիրի ստեղծման պատմությանը: Ընթերցում-քննարկումներ (նաև՝ առցանց) են կազմակերպվում վերը նշված թեմաների շուրջ: Սովորողները տարբեր ուսումնասիրություններ են անցկացնում ընտանիքում, կրթահամալիրում, հարցազրույցներ են վարում, ռադիոնյութեր են պատրաստում, որտեղ ներկայացնում են ամենասեփականատերին, սեփականացու այսօվա կերպարի մասին ունեցած իրենց պատկերացումները: Ծնողները, մասնագետ դասավանդողները, ավագ սեփականատերները վարպետության դասեր են անցկացնում՝ կրտսեր դպրոցականներին փոխանցելով իրենց մասնագիտական հմտությունները: Ծնող ու սովորող մասնակցում են համերգների, ցուցահանդես-ցուցադրությունների, որտեղ ներկայացնում են իրենց աշխատանքները, ունեցած ձեռքբերումները: Ուսումնասիրության արդյունքները, իրենց պատումները, հարցազրույցները պարբերաբար հրատարակվում են դասարանական բլոգում, անհատական բլոգներում, ենթակայքում, կայքում:

Նախագծի ակնկալիքները, արդյունքները՝

- Պատումներ, ուսումնասիրություններ, հարցազրույցներ, ռադիոնյութեր մեծ ու փոքր սեփականատերների հետ
- Կրթական նորամուտներ, կրթական փոխանակումներ, ցուցահանդեսներ, ֆոտոցուցադրություններ, համերգներ, թատերական ներկայացումներ, մարզական մրցաշարեր:

Թթուղիկ

Թթուղիկի ամենամյա ավանդական ծեսը խորհրդանշական է: Այն իրականացվում է «Սեփականատեր օրեր. կրթահամալիրի տոն» նախագծի շրջանակներում:

Նպատակը՝

Պատրաստել թթու, որը կհամտեսենք «Սեփականատեր օրեր, կրթահամալիրի տոն» նախագծի ամփոփման ժամանակ:

Խնդիրները՝

- Բանջարանցից՝ խանութ. թթվի անցած ճանապարհը. քայլաշարի ստեղծում,
- արտադրող- սպառող, պահանջարկ - առաջարկ հասկացությունների շուրջ քննարկման կազմակերպում,
- թթու պատրաստելու բաղադրատոմսերի որոնում,
- հարցազրույցներ ընտանիքի կանանցից՝ ընտանեկան բաղադրատոմսերի գաղտնիքները թեմայով,

- գնումների ցուցակի կազմում,
- թվի համար անհրաժեշտ բանջարեղենների օգտակար հատկությունների մասին տեղեկությո՞ր որոնում, հրապարակում անհատական բլոգում,
- գնումների կազմակերպում, կատարում (ընտրություն կատարել, դասավորել տոպրակի մեջ, մոտենալ կշեռքին, մոտենալ գանձապահին և գնած մթերքը հասնցել դպրոց),
- բանջարեղենը տարաներում տեսակավորելու տարբերակների որոշում, տարաներում բանջարեղենների խմբավորման օրինաչափությունների ստեղծում (քանակի մոտավոր գնահատում, առարկաների զանգված - չափսեր, զանգված - քանակ, արժեք - քանակ հարաբերակցություն),
- թթվի տարաների պիտակավորում,
- պատրաստված թթվի համար գովազային հայտարարությունների հորինում, ստեղծում:

Իրականացման ընթացքը (ընդհանուր նկարագրություն)՝

Նախագիծն ընդգրկում է գործունեության գրեթե բոլոր ձևերը:

Մինչ թթուդրիկին անցնելը դիտում ենք տեսանյութեր բանջարեղենների մթերման, պահածոյացման գործընթացի մասին (բանջարեղենի տեղափոխում բանջարանոցից պահեստ, գործարան, մթերում, պահածոյացում, պիտակներ, բաղադրություն), թթվի բաղադրատոմսեր ենք հավաքում, հրապարակում: Միասին անհրաժեշտ գնացուցակ ենք կազմում: Սովորողները բաժանվում են խմբերի, որտեղ յուրաքանչյուր խումբ ստանում է կոնկրետ հանձնարարություն: Մի խումբը կարող է մուտքագրել թթուդրիկի համար անհրաժեշտ պարագաների ու մթերքի (բանջարեղենի) ցանկը: Կարող են առանձին ցուցակներ կազմել կգ-ով, հատով, տուփով գնվող ապրանքների համար: Մյուս խումբը հաշվում է անհրաժեշտ գումարի չափը: Առևտրից հետո կարող են համեմատել առևտրից առաջ ու հետո կազմված գնացուցակները, գտնել տարբերությունները:

Խոհանոցային գործունեության արդյունքում բանջարեղենային տարբեր կերպարներ են ստանում, որոնք դառնում են թատերական, տիկնիկային ներկայացումների հերոսներ: Այս ընթացքում սովորած երգերով ու պարերով մեկնարկում է թթուդրիկը: Թթուդրիկի թեման շարունակվում է լեզվագործունեության ընթացքում: Ռոդարիական հնարքների կիրառմամբ սովորողները հորինում են թթվային ասելուկներ, հանելուկներ, շուտասելուկներ, ամենամասնական պատմություններ, ստեղծում ենք «Թթվային ընթերցարաններ», բաղադրատոմսերի ժողովածու և այլն: Սովորողները մասնակցում են տարբեր ցուցադրությունների, համերգների՝ ներկայացնելով իրենց աշխատանքները:

Սուջուխի ծես

Նախագիծն իրականացվում է «Մերաստացու օրեր. Կրթահամալիրի տոն» նախագծի շրջանակներում:

Նպատակը՝

Սուջուխի ծեսը կրթահամալիրի ուսումնական գործընթացում ներառելու, սովորողներին ազգային ավանդույթներին ծանոթացնելու փորձ:

Խնդիրները՝

Բանավոր խոսքի զարգացում, տեխնոլոգիական հմտությունների, կարողությունների զարգացում, բանավոր հաշվելու, համեմատելու, համադրելու կարողության զարգացում:

Անհրաժեշտ նյութեր՝ ընկույզ, թարմ և չոր մրգեր, ալյուր, շաքար, ջուր, համեմունքներ, թել, ասեղ

Իրականացման ընթացքը՝

Սովորողները նախապես կձանթթանան աշխատանքային երգերին, կսովորեն դրանցից մի քանիսը: Երգերի մեջ որպես երաժշտական գործիք կկիրառվի ընկույզը(շրխկաններով երգեր): Շարքավա ընթացքում ընկույզից կստանանք հերոսներ, դեմքեր, կխաղանք ներկայացումներ ուրախ ու տխուր մարդկանց մասին: Մասնակիցները կհաշվեն ընկույզները, կչափեն թելերը, կչափեն անհրաժեշտ քանակությամբ այլուրը, համեմունքները, կպատրաստենք շփոթը: Շարված ընկույզները կթաթախվեն: Տեղեկատվական նյութեր կկարդան ընկույզի մասին: Պատմություններ կհորինեն «Չարաճճի ընկույզը» վերնագրով:

Արդյունքը՝ «Սուջուխի ծեսը» դարձնել ավանդական՝ ինտեգրավելով ուսումնական տարբեր գործունեություններ:

Բարև 2020. Ամանորի ծես

Իրականացման տևողությունը՝ դեկտեմբեր

Նպատակը՝

Սովորողներին մասնակից դարձնելով ամանորյա ծեսի նախապատրաստությանը, ներգրավելով խմբային հետազոտական աշխատանքներում, ծանոթացնել հայկական և այլ երկրների ամանորի սովորույթներին:

Խնդիրները՝

- Ստեղծագործական կարողությունների զարգացում,
- տեղեկատվական աղբյուրներից (համացանց, հանրագիտարան, ամսագիր) հետաքրքրող տեղեկույթը գտնելու, վերարտադրելու (լսելու, կարդալու միջոցով) զարգացում,
- հավաքագրած տեղեկույթում գլխավոր միտքը երկրորդականից տարբերակելու, առանձնացնելու, համառոտելու կարողությունների զարգացում,
- հավաքագրած տեղեկույթը Power point ծրագրով ներկանացնելու կարողությունների զարգացում,
- նամակներ գրելու կարողությունների զարգացում,
- բացիկներ, հրավիրատոմսեր պատրաստելու կարողությունների զարգացում (թղթային, էլեկտրոնային),
- ամանորյա խաղալիքների, զարդերի պատրաստում,
- միջավայրի դասարան-դպրոցի ձևավորման աշխատանքների մասնակցություն,
- ամանորի մասին սովորած երգերի վերհիշում, նոր երգերի ուսուցում,
- ամանորի մասին բարեմաղթանքների, առած-ասացվածների ուսուցում,
- խոհանոցային գործունեության կազմակերպում, իրականացում,
- Ամանորի ծեսի մասնակցություն:

Ուսումնական ռեսուրսները՝

Ստեղծագործությունների ցանկ՝

- [Չյուն.Գեղամ Մարյան](#)
- [Հեքիաթ փշատերև ծառի մասին](#)
- [Եղևնին. Համո Սահյան](#)

Ծիսական

- [Սուրբ ծննդյան երգեր, ավետիսներ](#)
- [«Սուրբ Ծննդյան ավետիսներ, տաղեր, շարականներ»](#)
- [Ամանորյա բարեմաղթանքներ](#)

- [«Օրսական խոհանոց»](#),
- [«Օրսական երգեր, բարեմաղթանքներ»](#),
- [«Օրսական գուշակություններ»](#),
- [«Օրսական շրջայցեր, կրակի և ջրի օրհնություն»](#)
- Ընկուզախաղեր՝ [1](#), [2](#), [3](#), [4](#)

Իրականացման ընթացքը՝

Կարդալ ամանորի, տոնածառի, Ձմեռ պապիկի, տոնածառի խաղալիքների մասին տեղեկատվական նյութեր, կարդացածը պատմել, ներկայացնել Power Point ծրագրով (աշխատանք խմբերով)

Դիտել տեսանյութեր ամանորի մասին, քննարկել:

Հորինել պատմություն ձմռան, ձյան փաթիլի, Ձմեռ պապիկի, ... մասին: Պատմությունը մուտքագրել, նկարազարդել, ներկայացնել մեդիաընթացարանի տեսքով:

Նամակներ գրել Ձմեռ պապիկին, ընկերներին, այլ դպրոցի սովորողներին:

Քարտեզի վրա գտնել այն երկրները, որտեղ Նոր տարին տոնում են գարնանը, ամռանը ..., գտնել այն երկիրը, որտեղ ապրում է Ձմեռ պապը:

Որոնել տարեգաթա, ամանորյա բլիթներ պատրաստելու բաղադրատոմսեր: Դասարանում պատրաստել բլիթներ, գաթաներ:

Ուսումնասիրել [դեկտեմբեր ամսվա եղանակի](#) կանխատեսումների աղյուսակը:

Պատրաստել կավե, թղթե, այլ նյութերից [տոնածառի խաղալիքներ, ամանորյա զարդեր](#):

Կազմել խնդիրներ, առաջադրանքներ, խաղեր ամանորի թեմայի շուրջ:

Այցելել ... թատրոն՝ ամանորյա ներկայացում դիտելու:

Սովորել ամանորյա երգեր. [Սուրբ ծննդյան երգեր, ավետիսներ](#), բեմադրել պար:

Կազմակերպել ձմեռային-ամանորյա ֆոտոպլեններ:

Արդյունքում՝

Ստեղծված ուսումնական նյութերը հրապարակել անհատական բլոգներում, դասարանական բլոգում, ենթակայքում: Մասնակցել «Ամանորյա ծես»-ին:

Լույսեր, գույներ, ազդեցություններ

(համագործակցային նախագիծ)

«Լույսեր, գույներ, դողանջներ, մեղեդիներ, ազդեցություններ» ստուգատեսը համադպրոցական է և իրականացվում է «Ամանորի ծես» նախագծի շրջանակներում:

Նպատակը՝

Դպրոցի ներքին և արտաքին տարածքների, խմբասենյակների, առանձին սրահների ամանորյա ձևավորման աշխատանքների կազմակերպումն է:

Խնդիրները՝

- Ամանորյա նախապատրաստական աշխատանքներ՝ էսքիզների ստեղծում, աշխատանքային քննարկումներ սովորողների հետ, նյութերի ընտրություն,
- տոնական ծառի ստեղծում, տեղադրում, զարդարում,
- միջավայրի ձևավորման համար ամանորյա դեկորների պատրաստում՝ պուրակների ձևավորում, տոնական խաղալիքների պատրաստում, ձևավորում,
- սովորողների թեմատիկ կերպարների ստեղծում՝ հագուստի, այլ աքսեսուարների պատրաստում,
- տոնական խոհանոց՝ տարեհացի պատրաստում:

Անհրաժեշտ նյութեր՝ տաք սոսիս, թելեր (տարբեր որակի և գույնի), բժշկական փայտիկներ, գունավոր թղթեր, կոճակներ, սովարաթուղթ և այլն

Արդյունքում՝

Դասարանական խումբը՝ համագործակցելով մյուս դասարանների հետ, նախապատրաստվում և մասնակցում է « Ամանորի ծես» -ին:

Ուսումնական ձևեր

Նախագիծը նախատեսված է ձմեռային-տոնական արձակուրդների ընթացքում իրականացնելու համար:

Հեռավար-առցանց աշխատանքային ուղղություններ՝

- Ուսումնական առաջին շրջանի ամփոփում,
- «[Ձմեռ պատյ](#)», «[Տոնածառ](#)», «[Ամանոր](#)» պրեզենտացիաների ամբողջացում, հրապարակում բլոգում
- Տոնական Երևան. ֆոտոշար (Լուսանկարել Երևանի որևէ բակ, թաղամաս, փողոց, որը տոնական է ու զարդարված: Լուսանկարներն ու նկարագրությունը տեղադրել բլոգում:)
- Ամանորի մասին պատմում են տատիկ-պպիկները. հարցազրույց
- Տոնական խոհանոց
- Ամանորյա ուտեստներ
- Ամանորն իմ ընտանիքում
- Ամանորյա իրարանցում մեր տանը, բակում, թաղում, այգում
- Եղանակային դիտարկումներ. ֆոտոշար և պատում
- Ձմեռային ֆոտոշար
- Էլեկտրոնային բացիկ Ձմեռ պապիկին
- Ամանորյա շարժական մեդիաբացիկներ
- Բնագիտական փորձեր ձյան, ջրի, սառույցի վերաբերյալ

Արդյունքում՝

Նախագծի շրջանակներում ստեղծված ուսումնական նյութերը հրապարակել անհատական և դասարանական բլոգներում, ենթակայքում:

Ուսուցման երրորդ շրջան

Կենդանիների ձևաձև

(հետազոտական նախագիծ)

Իրականացման տևողությունը՝ հունվար-փետրվար

Ընթերցանության համար՝

[Ձևաձև կենդանիները](#)

Տեսանյութերի դիտում, քննարկում՝

[Անտառային կենդանիները ձմռանը \(ռուս\)](#)

[Ինչպես են կենդանիները պատրաստվում ձմռանը \(ռուս\)](#)

[Ձմռող թռչուններ \(ռուս\)](#)

[10 արկտիկական կենդանիներ \(անգլ\)](#)

Ընթացքը՝

Սովորողները բաժանվում են խմբերի, թեմային համապատասխան աշխատանք են ընտրում, համացանցում գտնում են տեղեկություններ, ստեղծում են սալիկահանդես Power point ծրագրով:

Արդյունքում՝

Ստեղծում ենք մեդիաընթերցարաններ, հրապարակում անհատական բլոգներում, ներկայացնում դասարանական խմբին:

Թումանյանական օրեր

Իրականացման տևողությունը՝ փետրվար

Նպատակը՝ Թումանյանական ստեղծագործությունների միջոցով զարգացնել սովորողների բանավոր և գրավոր խոսքը, վերլուծական, քննադատական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը, անկաշկանդ արտահայտվելու կարողությունը:

Խնդիրները՝

- Բանավոր խոսքի զարգացում (պատմել լսած հեքիաթը, պատմությունը, կարծիք, վերաբերմունք արտահայտել հերոսի, արարքի վերաբերյալ, պատճառաբանել սեփական կարծիքը, թվարկել պատմության դեպքերն ըստ հերթականության, պատասխանել ծանոթ ստեղծագործությանը վերաբերող հարցերին)
- Գրավոր խոսքի զարգացում (նամակներ գրել հեքիաթի, պատմության հերոսին, ավարտել կիսատ նախադասությունները, լրացնել նախադասության մեջ բաց թողած բառերը)
- Ստեղծագործական մտքի զարգացում (նոր ավարտ հորինել հեքիաթի համար, փոխել հեքիաթի ավարտը)

- Մեղիահիմնությունների զարգացում (ստեղծել դասարանական-ընտանեկան աուդիոգրքեր, էլեկտրոնային ընթերցարաններ, տեսանյութեր)
- Ինքնուրույն աշխատելու հմտությունների զարգացում
- Տեխնոլոգիական հմտությունների զարգացում
- Հաղորդակցական հմտությունների զարգացում
- Համագործակցային հմտությունների զարգացում (թատերական – խաղ – ներկայացում - բեմադրություն)

Ստեղծագործությունների ցանկ

[Մանուկն ու ջուրը](#)

[Թռչունի մտածմունքը](#)

[Ամենից լավ տունը](#)

[Գարնան առավոտ](#)

[Շունն ու կատուն](#)

[Անբան Հուրին](#)

[Բարեկենդանը](#)

[Չախորդ Փանոսը](#)

[Տերն ու ծառան](#)

Ունկնդրում և վերհիշում ենք [թումանյանական տեքստերով երգերը](#):

Ընտանեկան նախագծեր՝

Ուսումնական նախագիծը շարունակվում, տեղափոխվում է ընտանիք՝ ներառելով սովորողի ընտանիքի անդամներին: Ընտանիքում ստեղծվում են թումանյանական տարբեր տեսակի ներկայացումներ, ընթերցումներ, որոնք մեղիայի շնորհին հասանելի են դառնում բոլորին:

Ուսումնական ճամփորդություն՝

[Այցելություն Խամաճիկների թատրոն «Շունն ու կատուն» ներկայացման դիտում:](#)

Արդյունքում ստեղծված ուսումնական նյութերը հրապարակվում են սովորողի անհատական բլոգում, դասարանական բլոգում, ենթակայքում, կայքում, սոցցանցերում:

Ձոն

Ձոն ուսումնական նախագիծն ուղղված է արձանագրելու սովորողների տեխնոլոգիական կարողություններն ու հմտությունները: Նախագծի հիմնական թեման, ուղղություններն են մայրիկն ու գարունը:

Իրականացման տևողությունը՝ մարտի 2-ապրիլի 7

Նպատակը՝ Ձեռք բերած տեխնոլոգիական հմտությունների շնորհիվ նախապատրաստվել «Մայրիկատունին», նպաստել շրջակա միջավայրի պահպանման, մաքրման, բարելավման աշխատանքներին:

Խնդիրները՝

- Ստեղծագործական երևակայության զարգացում
- տեխնոլոգիական հմտությունների զարգացում
- մեդիահմտությունների զարգացում
- ուսումնասիրելու, դիտարկելու, արձանագրելու հմտությունների զարգացում
- հոգատարության - խնամքի, պատասխանատվության, հետևողականության դրսևորում ուսումնական գործունեության ընթացքում

Անհրաժեշտ գործիքները՝ անհատական նեթբուք-նոթբուք, ձայնագրիչ, ֆոտոխցիկ, գունավոր թղթեր, ժապավեններ, սոսինձ, մկրատ, կավ, ջրաներկ, գուաշ, վրձին, այլ նյութեր:

Նախագծի իրականացումը ըստ գործունեության ձևերի՝

Լեզվագործունեություն + ստեղծականություն + մեդիա

- Բանավոր և գրավոր պատումներ մայրիկների մասին (նկարագրել, բնութագրել մայրիկներին)
- Մայրիկագովք. ցուցահանդես Հյուսիսային դպրոցի Արևելյան լանջերին
- Ռադիո թողարկումներ՝ նվիրված մայրիկներին
- «Մայրիկների մոլորակ» ստեղծագործական աշխատանք

Տեխնոլոգիա + մեդիա

- Տոնական բացիկների պատրաստում ([թղթային](#), էլեկտրոնային)
- Մայրիկների դիմանկարների շարք Paint-ով, գուաշով, գունավոր մատիտներով

Բնագիտություն + մեդիա

- Բույսերի կտրոնների արմատակալում ու դիտարկում
- Ծաղկատունկ

Արդյունքում՝

Նախագծի ընթացքում ստեղծված աշխատանքները հրապարակվում են դասարանական բլոգում, սովորողների անհատական բլոգներում, ենթակայքում:

Ուսումնական զարուն

Նախագիծը նախատեսված է զարնանային ուսումնական արձակուրդների ընթացքում իրականացնելու համար:

Նպատակը՝

Ընտանիքի անդամներին ներառել ուսումնական գործունեության կազմակերպման և իրականացման մեջ:

Խնդիրները՝

- Դիտողականության, շրջապատում օրինաչափություններ նկատելու, դիտարկելու, վերլուծելու կարողության զարգացմանը
- Շրջապատը հետազոտելու, խնամելու, պահպանելու, բարեկարգելու կարողությունների զարգացում
- Բույսի, եղանակի, երևույթի, առարկայի, օրվա փոփոխությունների դիտարկում
- Թվային միջոցներից օգտվելու կարողությունների կիրառում

- Անհրաժեշտ ինֆորմացիան ձեռք բերելու կարողությունների զարգացում
- Paint, PowerPoint ծրագրերի կիրառում

Աշխատանքնային ուղղությունները՝

- Հարցազրույցներ ծանոթ-բարեկամների, տատիկ-պապիկների հետ գարնանային գյուղատնտեսական խորհուրդներ՝ ծառատունկի-ծաղկատունկի, գարնանային բակ-պարտեզի աշխատանքների մասին
- Բանահավաքություն. երգում են, պատմում են մեծերը
- Բնագիտական և այլ հետաքրքիր փորձեր
- Ընտանեկան թատրոն
- Գարնանային ֆոտոշարքերի ստեղծում
- Օգտագործելով թվային և մեդիա միջոցները գրանցել բնության և եղանակի փոփոխությունները օրվա տարբեր ժամերին

Գարնանային ընթերցանություն

Ընտանեկան գրադարանից ընտրի՛ր որևէ գիրք (հեքիաթ, պատմվածք), կարդա՛ գարնանային արձակուրդների ընթացքում: Եթե ունես նախընտրած գիրք, որն ուզում ես կարդալ կամ կարդում ես, կարող ես շարունակել այն:

Գրի՛քը կարդալու ընթացքում կամ հետո կատարի՛ր հետևյալ առաջադրանքները՝

- Քեզ դուր եկած ամենահետաքրքիր հատվածը կամ արտահայտությունը:
- Առանձնացրո՛ւ հերոսներին, նկարագրի՛ր և բնութագրի՛ր նրանց:
- Գրի՛ր կարծիք կարդացածդ գրքի մասին:

Այս ամենն, իհարկե, տեղադրի՛ր բլոգումդ:

2. Ընտրի՛ր [կցված հղումի](#) թանգարաններից մեկը կամ մի քանիսը, առցանց այցելի՛ր, ընտրի՛ր մի քանի նկար, Power point-ով սարքի՛ր այդ առցանց թանգարանի քո՛ ընտրանին: (Առաջին էջում՝ «Միիթար Սեբաստացի» կրթահամալիր, Հյուսիսային դպրոց-պարտեզ, 3.1 դասարան, սովորողի անուն-ազգանունը, հաջորդիվ՝ ընտրված նմուշները՝ նշելով հեղինակին):

3. Պատմի՛ր նաև քո գարնանային հանգստի մասին: Որտեղ էլ լինես, պատմի՛ր քո գտնվելու վայրի մասին, լուսանկարի՛ր գարնանային գեղեցիկ տեսարաններ, տեսաֆիլմ պատրաստի՛ր: Կիսվի՛ր գարնանային քո զգացողություններով:

Առաջարկում եմ այս առաջադրանքն անել երկու տարբերակով՝

- պատումի ձևով՝ անպայման արածդ լուսանկարներով,
- տեսապատումի (տեսաֆիլմի) ձևով (այսինքն՝ գարնանային մի սիրուն այգում նստած պատմում ես, թե ինչպես անցկացրեցիր արձակուրդդ, ինչ կարդացիր):

Արդյունքը՝

Նախագծի ընթացքում ու արդյունքում ստեղծված՝ տեսագրված, նկարահանված, ձայնագրված նյութերը համապատասխան մշակումից հետո հրապարակվում են դասարանական բլոգում, սովորողների անհատական բլոգներում:

Աղայան + Ռոդարի

Ընթերցողական- ստեղծագործական նախագիծ

Իրականացման տևողությունը՝ մարտի 15-ից ապրիլի 15

Նպատակը՝

Բանավոր և գրավոր խոսքի, վերլուծական-քննադատական մտքի, ստեղծագործական երևակայության զարգացում Ղ. Աղայանի, Ջ. Ռոդարիի ստեղծագործությունների միջոցով:

Խնդիրները՝

- Բանավոր և գրավոր խոսքի զարգացում
- Ստեղծագործական երևակայության զարգացում
- Կարդալու, պատմելու որակական հատկանիշների զարգացում
- Մեղիատեխնոլոգիական կարողությունների զարգացում
- Տեխնոլոգիական կարողությունների զարգացում

Ընթացքը՝

Սովորողները կկարդան Ղ. Աղայանի, Ջ. Ռոդարիի հեքիաթները, տարբեր եղանակներով կներկայացնեն կարդացածը:

Ուսումնական գործունեության ձևեր՝

- Լեզվագործունեություն՝ [ռոդարիական հնարքների կիրառում](#), հեքիաթների, բառերի հորինում, ընթերցանություն, ընտանեկան ընթերցումներ:
- Տեխնոլոգիական գործունեություն՝ Կավագործության, նկարչության, տիկնիկագործության, խոհանոցային գործունեության միջոցով հերոսների ստեղծում:
- Թատրոն-երաժշտական՝ ստեղծագործությունների խաղ-բեմականացում, շիլափլավի հորինում՝ երաժշտական ազգային երգ ու պարի համադրումով:

Ուսումնական ռեսուրսներ՝

Ղազարոս Աղայանի [«Մանկական պատմվածքներ»](#), [բանաստեղծություններ](#)

[Ջաննի Ռոդարիի ստեղծագործություններ](#)

Ղ. [Աղայանի մանկական ստեղծագործությունների հիման վրա ստեղծված տեսանյութեր](#)

[Ջ.Ռոդարիի ստեղծագործությունների հիման վրա ստեղծված տեսանյութեր](#)

Ջ. Ռոդարիի [«Ստեղծագործական երևակայության քերականություն»](#)

Ձատկածես

Ծիսական նախագիծ

Իրականացման տևողությունը՝ Մարտի 15 - ապրիլի 15

Նպատակը՝

Ծաղկազարդ, Սուրբ Հարության տոն թեմաների շուրջ նախագծային գործունեություն իրականացնելով՝ սովորողները կզարգացնեն ունեցած կարողությունները, հմտություններն ու գիտելիքները:

Խնդիրները՝

- ստեղծագործական երևակայության զարգացում
- տեքստը խմբագրելու, համառոտ, ընդարձակ պատմելու հմտությունների զարգացում
- ինքնուրույն և խմբով աշխատելու կարողությունների զարգացում
- ընտանեկան միջավայրում աշխատելու, նախագծերում ընտանիքի անդամների ներգրավվածություն
- որոնողական համակարգը կիրառելու հմտությունների զարգացում
- տեխնոլոգիական, մեդիատեխնոլոգիական հմտությունների զարգացում

Ուսումնական գործունեության ձևեր՝

Լեզվական-ստեղծագործական՝

- Ձատիկ տոնի մասին տեղեկատվական նյութերի, «Աստվածաշնչի» ընթերցում, քննարկում,
- տեքստի հետ աշխատելու հմտությունների զարգացում՝ անհասկանալի բառերի առանձնացում, օնլայն բառարանի միջոցով բառերի բացատրություն, նոր բառերով փոխարինում, վերապատմում,
- զատկական առած-ասացվածքների ընթերցում, քննարկում, մեկնաբանություն,
- զատկական առած-ասացվածքների փաթեթի ստեղծում,
- զատկական հորինուկների, պատմությունների փաթեթի ստեղծում:

Մաթեմատիկական

- Օրացուցային հաշվարկ՝ պասի ընթացք, օրերի հաճախականություն, ածիկի՝ որպես զատկական հիմնական բաղադրիչի աճման գործընթացն ըստ օրերի,
- զատկական գնումներ՝ անհրաժեշտ պարագաների ցանկ, գնացուցակ, գնումներ
- զատկական թեմաներով խնդիրների, առաջադրանքների կազմում, լուծում:

Բնագիտական

- Ածիկի՝ որպես զատկական հիմնական բաղադրիչի ուսումնասիրում, դիտարկում,
- ներկանյութի, ձվի ուսումնասիրում,
- ձվի՝ ներկման գործընթացի դիտարկում, ուսումնասիրում, մեկնաբանություն,
- բնագիտական փորձեր ձվով, ներկանյութերով:

Տեխնոլոգիական

- Ձատկական պարագաների (դատարկ ձվիկներ, կավե գատիկներ և այլն) պատրաստում,
- զատկական սեղանի ձևավորում,
- զատկական բարեմադրանքների բացիկների ստեղծում ([թղթային](#), էլեկտրոնային)
- զատկական կերակրատեսակների և թխվածքների պատրաստում:

Երաժշտական

- [Ձատկական երգերի](#) տեքստերի յուրացում, երգերի ունկնդրում, կատարում:

Ընտանեկան գործունեություն

Ձատկական տոնի պատրաստություն ընտանեկան միջավայրում (տեսանյութերի, ֆոտոպատումների պատրաստում, հրապարակում բլոգներում, ենթակայքում)

Ուսումնական ռեսուրսներ՝

- [Ձատկե գատիկ է... \(զատկական ասիկներ-ասույթներ\)](#)

- [Ձատիկը «Մխիթար Մեբաստացի» կրթահամալիրում](#)
- [Լուսիկ Ագուլեցի` Ինչպես նշել Ձատիկը](#)

Արդյունքը`

Նախագծի շրջանակներում ստեղծված ուսումնական նյութերը՝ ռադիոնյութ, տեսանյութ, սալիկահանդես, հրապարակում սովորողի անհատական բլոգում, դասարանական բլոգում, ենթակայքում: Ստեղծած տեխնոլոգիական նյութերի ցուցադրություն, «Ձատկածեսի» իրականացում:

Ելք. ստուգաեսու

Իրականացման տևողությունը` 20.04-25.05

Նպատակը`

Սովորողները, անհատական և խմբային նախագծեր իրականացնելով, կներկայացնեն 3-րդ դասարանում իրենց ձեռք բերած կարողությունները և հմտությունները:

Խնդիրները`

- Ընթերցողական կարողությունների,
- մաթեմատիկական հնարավորությունների,
- բլոգային հմտությունների, մեդիակարողությունների,
- մարզական կարողությունների,
- տեխնոլոգիական հմտությունների,
- բնագիտական կարողությունների ցուցադրում:

Գործունեության ձևերը, արդյունքները`

Ընթերցողական

Սովորողներն իրենց նախընտրությամբ կկարդան որևէ ստեղծագործություն, նշված եղանակներից մեկով կներկայացնեն կարդացածը:

- Հեղինակային նկարագրումներով էլեկտրոնային գիրք
- Ռադիոթատրոն, սովերային, տիկնիկային, ընտանեկան թատրոն
- Ընտանեկան ընթերցում

Մեդիատեխնոլոգիական

Աշխատանքային ուղղությունները`

«Փոխանցում եմ մեդիահմտություն» - Սովորողները նկարահանում են տեսանյութեր, որոնցում ներկայացնում, սովորեցնում են որևէ մեդիահմտություն:

Թեմաներ`

- Բլոգավարություն(բլոգում նյութեր հրապարակել, խմբագրել, նկար տեղադրել, հղում կցել և այլն)
- Մոնտաժային աշխատանք անել որևէ ծրագրով
- Սահիկահանդեսներ սարքել
- Սահիկահանդեսները տեղադրել slide share հարթակում
- Ձայնագրությունները ռադիոթողարկման վերածել
- Որևէ նոր ծրագրի ուսուցում

- Որևէ օգտակար կայքից օգտվելու հմտությունների ցուցադրում, *օրինակ՝ (chess.am)*

«Դիտարկում եմ դասընկերոջս բլոգը» - Յուրաքանչյուր սովորող ուսումնասիրում է իրեն կցված դասընկերոջ բլոգը: Հաշվում նշված ժամանակահատվածում (1 ամիս) հրապարակված նյութերի քանակը, առանձնացնում իր հավանած նյութի հղումը:

Մաթեմատիկական

«Մաթեմատիկական մարտահրավեր ընկերոջս» - Սովորողներն թեմայի շրջանակներում տվյալներ են հավաքում, խնդիր են կազմում և տեսանյութի տեսքով մարտահրավեր ուղարկում ընկերոջը՝ լուծելու համար (ցանկալի է սովորողների գույգերը ներկայացնել) :

Թեմաները՝

- գնումներ
- չափումներ
- ժամ-ժամացույց
- լուցկիներով առաջադրանքներ
- խորամանկ խնդիրներ

Ստացողը դիտում է տեսաուղերձը և պատասխան տեսանյութով ուղարկում լուծումը:

Մարզական

Աշխատանքային ուղղությունները՝

- «Իմ տունը՝ մարզասրահ» - Սովորողները ցույց են տալիս, թե ինչպես են մարզվում տանը, հնարավորության դեպքում տանը ստանում են ընտանեկան մարզասրահի օրինակ՝ վազքուղի, գլուխկոնձի տալու տարածք, տարբեր մարզական խաղեր խաղալու հնարավորություններ: Մարզական հմտություններ կարող են ցույց տալ նաև ընտանիքի անդամները, կարող եք ներկայացնել հարգատներից որևէ մեկի հետ մարզական պարապմունքը: Հրապարակված տեսանյութերը պետք է լինեն ուսուցողական, սովորողը ցույց տա, թե ինչպես է մարզվում կամ որևէ մարզական գործունեություն անում:
- «Իմ սիրելի մարզաձևը» - Յուրաքանչյուր սովորող իր նախընտրած մարզաձևի մասին համացանցից կառանձնացնի հետաքրքիր փաստեր, ռեկորդներ և այլն: Կներկայացնի ռադիոնյութի, տեսանյութի կամ սալիկահանդեսի (Power point) տեսքով: Կարող են նաև հարցազրույց վարել մարզիկների հետ:

Տեխնոլոգիական

Աշխատանքային ուղղությունները՝

- «Իմ ցուցահանդեսը» - Յուրաքանչյուր սովորող բլոգում կներկայացնի տարվա ընթացքում իր նկարած նկարների (նաև paint) ցուցահանդեսը:
- «Ես խոհանոցում» - Խոհանոցային գործունեության միջոցով կներկայացնեն իրենց խոհարարական հմտությունները:
- «Թափոնին՝ նոր կյանք» - Կներկայացնեն թափոնից ստեղծված կոլաժային աշխատանքներ:

Բնագիտական

Աշխատանքային ուղղությունները՝

- Միջավայրի խնամք. ծառատունկ, ծաղկատունկ, ջրում և այլն
- Մարդու օրգանիզմը. հիգիենա, առողջ ապրելակերպի կանոններ
- Բնագիտական փորձեր, դիտարկումներ
- Տիեզերք, մոլորակներ

Արդյունքը՝

Արդյունքում հավաքված մեդիափաթեթները կօգնեն կրտսեր սեբաստացիներին: